ԱԳՐԱՐԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2002 ԹԹ.

Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

1991 թվականից սկսած՝ անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նպատակամղվեց ազատական տնտեսության կայացմանը: ԽՍՀՄ փլուզմամբ առաջացած ինքնուրույն պետությունների հետ մեկտեղ Հայաստանը փորձեց գոյատևման խնդիրներն ինքնուրույն լուծել: Այդ ճանապարհին երկիրը հանդիպեց քաղաքական ու տնտեսական բազմաթիվ դժվարությունների, որոնք պայմանավորված էին ոչ միայն նախկին խորհրդային պետությունների հետ տնտեսական կապերի խզմամբ, շուկայական տընտեսություն վարելու փորձի բացակայությամբ, այլև 1988 թվականի երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներով, Հայաստան բռնագաղթված փախստականների օրհասական դրությամբ, էներգետիկ ճգնաժամով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ, որոնք հանգեցրին տնտեսական անկման մեծ ծավալների:

Հաշվի առնելով տևական շրջափակման և տնտեսական փլուզման մեջ գտնըվող հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ագրարային ոլորտի ունեցած վճռորոշ ազդեցությունը և ելնելով վերը թվարկված օբյեկտիվ պատճառներից՝ գյուղատնտեսությունը դիտվեց որպես տնտեսության ռազմավարական բնագավառներից մեկը, և 1991 թվականին հենց այս ոլորտից էլ սկսվեց սեփականաշնորհումը՝ նպատակ ունենալով այն դարձնել շուկայական հարաբերությունները կարգավորող կայուն ու արդյունավետ բնագավառ:

Այս կարևոր միջոցառումով պետք է ձևավորվեր հողի սեփականատեր գյուղացիական զանգված, խորհրդային մտածելակերպը ժխտող, նոր հոգեբանությամբ դաստիարակված խավ, որը աջակցելու և պաշտպանելու էր նոր արտադրահարաբերությունների ու համակարգի կայացումը: Բացի այդ, դրա շնորհիվ պատերազմական գոտու բնակչությունը կապվելու էր հողին, և սահմանամերձ գյուղերը ապահովելու էին երկրի պաշտպանությունը: Ձևավորվող շուկայական տնտեսությունը հանգեցնելու էր մեծ ծավալի գործազրկության: Ուստի հողահատկացումը գյուղական բնակավայրերում կարող էր մասամբ լուծել զբաղվածության խնդիրը: Այն կոչված էր լուծելու նաև պարենային անվտանգության հիմնախնդիրն ու բազմաթիվ այլ հարցեր: Միայն հողը մասնավորեցնելով հնարավոր չէր իրագործել գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրները, ապահովել նրա արդյունավետ զարգացումը: Անհրաժեշտ էր ապահովել գյուղատնտեսությանը սպասարկող ենթակառույցների գործունեությունը, որոշակի օրենսդրության պայմաններում դրանց սեփականաշնորհումը, հողի շուկայի ձևավորումը, գյուղմթերքների իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Նաև՝ վարկերի տրամադրում, ապահովագրման մեխանիզմի մշակում, մեքենայացման, պարարտանյութերի, թունաքիմիկատների մատակարարում, գյուղմթերքների վերամշակման ու արտահանման պայմանների ստեղծում, ինչպես նաև նոր արտադրահարաբերություններին համապատասխան մասնագետների պատրաստում, գյուղատնտեսական գիտության զարգացում և հողի սեփականաշնորհման նկատմամբ իրավունքի վերջնական ամրապնդում: Գլխավոր խնդիրը նորաստեղծ հանրապետության և սեփականաշնորհումն իրականացնողների համար մնում էր պարենային ինքնաապահովումը, միջազգային շուկայում տեղ գրավելը և բուսաբուծության ու անասնապահության զարգացումը:

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից Հայաստանն առաջինն էր, որ 1991 թ. կարճ ժամանակամիջոցում սեփականաշնորհեց հողը: Հողը մշակողին վերադարձնելու և նրա մասնավոր սեփականատիրությունը խրախուսելու նպատակով հանրապետության խորհրդարանը 1991 թ. հունվարի 29-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը»[1], փետրվարի 20-ից գործողության մեջ մտավ «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը[2]:

Դրանով սկիզբ դրվեց հողի, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և այլ միջոցների սեփականաշնորհման գործընթացին: Ջուգահեռաբար ձևավորվեցին հողի մասնավոր սեփականության վրա հիմնված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Մասնավորեցման ընթացքում հանրապետության շուրջ 900 կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և միջտնտեսային գյուղատնտեսական ձեռնարկությունների 91%-ը լուծարվեց: Դրանց փոխարեն ձևավորվեցին և այժմ գործում են 332 598 գյուղացիական և ընդամենը 10 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Սեփականաշնորհվեց գյուղատնտեսական օգտագործելի հողերի 61 %-ը (շուրջ 450 հազ. հա): Դրանից 93,1 %-ը բաժին ընկավ գյուղացիական և 6,9 %-ը կոլեկտիվ տնտեսություններին: Սեփականաշնորհվեց վարելահողերի 63 %-ը, բազմամյա տնկարկների 58 %-ը և խոտհարքերի 54,9 %-ը: Սեփականաշնորհման հետևանքով 11, 6 հազ. հա մշակովի հող կորավ ճանապարհների և միջտնտեսային բաժանարարների տակ: Անասնապահության ոլորտում սեփականաշնորհվեց անասնագլխաքանակի 99, 0 %-ը, իսկ գյուղատնտեսական տեխնիկայի ոլորտում՝ կոմբայնների 47, 3, տրակտորների 69, 4, բեռնատար ավտոմեքենաների 60,4 %-ը[3]: Գյուղատնտեսության սպասարկումների հատվածում մասնավորի բաժինը 70 % է: Հողերի սեփականաշնորհման քաղաքականությունը ամրապնդվեց ՀՀ կառավարության ընդունած մի շարք որոշումներով և 2001թ. մայիսի 2-ին ընդունված Հայաստանի Հանրապետության նոր հողային օրենսգրքով[4]: Հողի սեփականատեր դարձան հիմնականում բոլոր գյուղաբնակները և այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները, որոնք նման ցանկություն էին հայտնել: Հողի սեփականաշնորհման մասին օրենքը, որն ընդունվեց տնտեսական ճգնաժամի ծանր պայմաններում, գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և որոշ չափով նպաստեց նրա գոյության պահպանմանը, մեղմեց սովի առաջացման հնարավորությունները: Ագրարային ոլորտի արմատական բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան գյուղացիության աշխատանքային գործունեության աշխուժացման և աշխատողների կազմի երիտասարդացման վրա: Նկատելիորեն մեծացավ գյուղացիների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը արտադրության ընդլայնման և արդյունավետության բարձրացման գործում: Նոր հիմունքներով կազմակերպվեց արտադրությունն ու գյուղական կյանքը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքերի կառուցվածքը: Սկսեցին տվյալ պայմաններին համապատասխան առավել արդյունավետ բույսեր մշակել և անասուններ պահել: Նրանք այլևս հարկադրված չէին կատարելու պլանային առաջադրանքներ: Հողի սեփականաշնորհման մասին օրենքի կենսագործմամբ զգալիորեն ավելացավ գյուղական բնակչությունը: Հողով բավարարվեց փախստականների մի մասը, վերակենդանացան նախկինում լքված շատ գյուղեր: Այդ ամենի շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում այնպիսի ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը, թեև 1993 թ. գյուղատնտեսության զուտ արդյունքի ծավալը 1989 թ. նկատմամբ նվազեց 18%-ով[5]:

---

[1] Տե՛ս «Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)», էջ 80-106:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 67-80:

[3] Տե՛ս «Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ», Եր., 2001, էջ 49, 52, 53:

[4] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք», Եր., 2001:

[5] Տե՛ս «ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր թիվ 1», 1994 թ. փետրվար, էջ 25, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», 1991, էջ 145, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», 1993-1994, էջ 131:

Այնուամենայնիվ 1990-ական թվականներին գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ձեռք բերեց անհամամասնական աճի միտում: Եթե այն խորհրդային շրջանում կազմել էր 12-12,5%, ապա 1990 թ. կազմել է 17,2%, 1994 թ.՝ 43,3%, 1995 թ. 50,6%, իսկ 2001 թ.՝ 28 %[6]: Ամենամեծ անկումը նկատվել է 2000 թվականի երաշտի հետևանքով: Այդ ժամանակ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմեց 23, 1 %: Փաստորեն 1995 թ. գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում ամենաբարձրն է եղել և 3,8%-ով գերազանցել է արդյունաբերության տեսակարար կշիռը[7]: Այս փոփոխությունները կարող էին գյուղատնտեսության և գյուղի սոցիալ-տնտեսական առաջընթացի արագացման կարևոր կրողվանի վերածվել, եթե դրանք ամրապնդվեին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, կարգավորված արտադրական հարաբերություններով, պետական հովանավորմամբ: Սակայն դրանց կարևորությունը չըմբռնվեց ու թերագնահատվեց, որի հետևանքով գյուղատնտեսությունը նահանջ ապրեց:

Տասնամյակների ընթացքում գյուղում ստեղծված արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մաշումը և փոշիացման հետևանքով սակավահող Հայաստանում ցանքատարածությունները կրճատվեցին մոտ 100 հազար հեկտարով (ավելի քան 20 %), բազմամյա տնկարկների տարածությունը՝ ավելի քան 30 հազար հեկտարով (35,9%)[8]: Եթե 1991 թ. հանրապետությունում կար 640 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն (251 հազ. կով), 1 մլն 186 հազ. ոչխար ու այծ, 311 հազ. խոզ, 9 մլն 352 հազ. թռչուն, ապա 2001 թ. հանրապետությունում կար 479 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն (262 հազ. կով), 548 հազ. ոչխար ու այծ, 70, 5 հազ. խոզ և 4 մլն 255 հազ. թռչուն[9]: 1990 թ. մեկ շնչի հաշվով հանրապետությունում արտադրվել է 125 կգ կաթ, 146 ձու, 26 կգ սպանդային քաշով միս, 10 տարի անց՝ 2000 թ. համապատասխանաբար 120 կգ կաթ, 86 ձու և 13 կգ միս[10]: Հայաստանի համար ավանդական համարվող պտղատու այգիները 1990 թ. շուրջ 50 հազ. հա էին՝ 155,5 հազ. տոննա համախառն բերքով, իսկ 2002 թ. այն կրճատվելով հասավ 22,7 հազ. հա՝ 128,5 հազ. տոննա համախառն բերքով: Մեկ շնչին ընկնող պտղի ծավալը նվազել է 50 %-ով: Խաղողի տարածքները այդ ընթացքում կրճատվելով 29,2 հազ. հա-ից հասել են 15 հազ.-ի, համախառն բերքը՝ 143,6 հազ. տոննայից 115, 8 հազ.-ի[11]: Մեծ չափերով նվազեց դաշտերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը, գյուղատնտեսության համախառն արտադրանքն ու հատկապես պետական մթերումների ծավալը:

Ցանքատարածությունների ու անասնագլխաքանակի, ինչպես նաև բերքատվության ու անասնամթերքների արտադրության վերջին տարիների զգալի կրճատումը վկայում է գյուղատնտեսության անկման մասին:

Սակայն, վերը նշված օբյեկտիվ պատճառների հետ միասին, գյուղատնտեսության ետընթացի հիմքում ընկած են ագրարային արմատական վերակառուցման աշխատանքներում տեղ գտած մի շարք լուրջ սխալներ, թերություններ ու վրիպումներ, որոնց բացահայտումն ու հաղթահարումը կարող են նպաստել գյուղատնտեսության և

---

[6] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-դեկտեմբերին», Եր., 2002, էջ 12:

[7] Տե՛ս «ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն. Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական բնութագրերը (ըստ 1991-1999 թ. սոցիալ-տնտեսական միտումների)», Եր.., 2000, էջ 4:

[8] Տե՛ս Հ. Ֆահրադյան, Հայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին, Էկոնոմիկա, 1-3, 1996, էջ 29:

[9] Տե՛ս «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, վիճակագրական ժողովածու 1990-1999 թթ.», Եր., 2001, էջ 6, 12, 13, 102, 126, 129, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-դեկտեմբերին», Եր., 2002, էջ 33:

[10] Տե՛ս "10 лет Содружества независимых государств (1991-2000)", статистический сборник, М., 2001, էջ 136:

[11] Տե՛ս «Գյուղացիական տնտեսությունների և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի և պտղատու այգիների մասին, 2002 թ. փետրվարի 1-ի դրությամբ, Վիճակագրական տեղեկագիր», Եր., 2002, էջ 3:

գյուղի սոցիալական առաջընթացին: Մասնավոր սեփականատիրական հողօգտագործման անցնելը բարդ և տևական գործընթաց է, որը չի կարելի լուծել մեկ հարվածով:

1. Սեփականաշնորհումը կատարվեց առանց հողի անհատական մշակման պայմանների, առանց գյուղատնտեսական տեխնիկայի և նրա օգտագործման հնարավորությունների և այլ խնդիրների խոր քննության:

Հանրապետությունում հատկապես 1996-1999 թթ. արձանագրվեց գյուղատնտեսական արտադրանքի, մասնավորապես հացահատիկի, կարտոֆիլի և պտղի արտադրության ծավալների զգալի նվազում: ՀՀ վիճակագրության անցկացրած հետազոտությունների տվյալներով հացահատիկային մշակաբույսերի կորուստները 1999 թ. 1 հեկտարից միջին հաշվով կազմել է 116 կգ՝ 1998 թ. 113 կգ-ի դիմաց, որը կազմել է հետազոտված տնտեսությունների 1 հա միջին բերքատվության 5,9%-ը[12]: Հացահատիկային կորուստները հանրապետության միջին մակարդակից բարձր են՝ Արարատի մարզի հետազոտված տնտեսություններում 238 կգ (միջին բերքատվության՝ 7,5%), Վայոց ձորի մարզում՝ 153 կգ (12,3%), Կոտայքի մարզում 136 կգ (9,6%)[13]: Վիճակն ավելի վատ է գյուղական համայնքներում:

Այսպես, Արարատի մարզի Ոսկեհատի համայնքի գյուղացիական տնտեսություններում կորուստները 1 հա հաշվով կազմել են 322 կգ (միջին բերքատվության 8,1%-ը), Ուստանի համայնքում՝ 300 կգ (10%), Ուրցաձորի համայնքում՝ 254 կգ (8,0%), Դալարի համայնքում՝ 250 կգ (6,3%) Վայոց ձորի մարզի Ագարակաձորի համայնքում՝ 168 կգ (5,7%), և այլն[14]:

Ուսումնասիրությունները վկայում են, որ 1999 թ. հանրապետությունում արտադրված հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի ընդհանուր ծավալի 61,8%-ը արտադրվել է Շիրակի, Արմավիրի և Արարատի մարզերի տնտեսություններում, կարտոֆիլի մոտ 64,5%-ը՝ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի, բանջարեղենինը և խաղողինը, համապատասխանաբար՝ 66,8 և 82,7%-ը՝ Արմավիրի ու Արարատի, պտղինը և հատապտուղներինը՝ 75,1%-ը, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերի տնտեսություններում, բոստանային մշակաբույսերի համախառն բերքի 85,8%-ը Արմավիրի մարզի տնտեսություններում: Դեռևս մտահոգության տեղիք է տալիս Արմավիրի և Արարատի մարզերի հայտնվելը հիմնական հացահատիկ արտադրող մարզերի շարքում: 1990 թ. համեմատությամբ նշված մարզերում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են շուրջ 4 անգամ: Այն դեպքում, երբ նշված նույն ժամանակաշրջանում խաղողի և պտղատու այգիների տնկարկների տարածությունները կրճատվել են շուրջ 2 անգամ[15]:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հանրապետության մարզերում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ 2000 թ. տևական երաշտի և բերքահավաքի ժամանակ հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի կորուստը հանրապետությունում կազմել է մոտ 124 հազար տոննա[16]: Մինչև սեփականաշնորհումը հանրապետության ցանքատարածությունների 31,6 %-ն էր հատկացված հացահատիկի մշակմանը: 1998-ին՝ 61,4 %-ը, 2000-ին՝ 53 %-ը[17]: Այնուհանդերձ, եթե 1988-ին հանրապետությունում հացահատիկի միջին բերքատվությունը 28, 1 գ/հա էր, ապա այսօր՝ ընդամենը 17-18 գ/հա:

2. Ագրարային արմատական վերակառուցումների գործընթացը հանրապետությունում սկսվել էր ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն

---

[12] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին», Եր., 2000, էջ 26:

[13] Տե՛ս նույն տեղը:

[14] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության ընթացիկ արխիվ», 1999 թ., գ. 6, ֆ. 23-24, թ. 68:

[15] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-մարտին», Եր., 2000, էջ 21:

[16] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-նոյեմբերին», Եր., 2001, էջ 18:

[17] Տե՛ս նույն տեղը:

մարմինների որոշումներով: Ուստի վերջիններս ժամանակ ունեին ինչպես հարկն է նախապատրաստվելու վերափոխումների գործընթացին, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, մեխանիզմներ մշակելու, որոնք ուղղված լինեին գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Գործնականում, սակայն, ագրարային վերափոխումները Հայաստանում սկսվեցին գարնանային աշխատանքներին զուգահեռ, որն անգամ թույլ չտվեց կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների ունեցվածքն ինչպես հարկն է գույքագրել և վերագնահատել: Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների համատարած լուծարումն իրականացվեց հապշտապ, շատ սեղմ ժամանակահատվածում, անկազմակերպ ու վարչահրամայական եղանակով: Գյուղատնտեսական բոլոր գոտիներում տնտեսությունների լուծարումը և հողի սեփականաշնորհումը իրականացվեցին միևնույն ձևով, առանց որևէ տարբերակման, հաշվի չառնվեցին տարբեր գոտիների առանձնահատկությունները:

3. Կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետությունում առանց այն էլ փոքր մակերես ունեցող մշակովի հողակտորները է՛լ ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով հատկացվեց համապատասխանաբար 1,3 և 1,5 հա հողաբաժին[18]: Առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը մինչև 0,75 հա էր, երկրի հյուսիս-արևելքում՝ 2,5 հա-ից մի քիչ ավելի[19]: Միայն համեմատության նպատակով նշենք, որ Ռուսաստանի դաշնությունում 1991 թ. ստեղծվեց 270 հազար գյուղացիական տնտեսություն, որոնց միջին հաշվով հատկացվեց 42 հա վարելահող[20]: Եթե նկատի ունենանք, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության բաժին է ընկնում միջին հաշվով 3-4 հողակտոր (ամեն մի տնտեսություն հող է ստացել 3-4 տեղերում, տարածքներում, այսինքն՝ աշխատում է 3-4 հողակտորի վրա), ապա կստացվի, որ սակավահող հանրապետությունում այժմ հողամշակման աշխատանք է տարվում ավելի քան 1 մլն 284 հազ. փոքր հողակտորների վրա: Նման պայմաններում փոքր, կտրտված հողակտորների վրա, բնականաբար, հնարավոր չէ կազմակերպել արդյունավետ արտադրություն, գրեթե անհնար է առաջատար տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը: Արտադրված գյուղմթերքների գրեթե 30%-ը իրացվում է ապրանքափոխանակության կարգով:

4. Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվի անդամները նախընտրում են ընտանեկան տնտեսվարման ձևը: Առաջին տարում արդեն ցանված հողատարածք ստանալով՝ գյուղացիությունը ոգևորվեց, բայց, հետագայում հանդիպելով մեծ դժվարությունների, հրաժարվեց մշակել հողային շատ տարածքներ: Պատահական չէ, որ Հայաստանի սակավահողության պայմաններում սեփականաշնորհված գյուղատնտեսական հողերի գրեթե 150 հազ. հա-ը չի մշակվում[21]: Դրան խանգարում է նաև գյուղացիական տնտեսություններին հատկացված հողակտորների միջև հեռավորությունը, որ հաճախ հասնում է 15-20 կիլոմետրի[22]:

Այդ պայմաններում մեծապես ընկնում է աշխատանքային, հողային, ջրային և նյութական մյուս միջոցների օգտագործման, գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, նվազում հողերի բերրիության վերականգնման ու բազմապատկման, աճեցրած բերքի փոխադրման, պահպանման և իրացման տնտեսական հնարավորությունները:

---

[18] Տե՛ս «Հայաստանը թվերով՝ 1992 թ., վիճակագրական համառոտ ժողովածու», էջ 91:

[19] Տե՛ս նույն տեղը:

[20] Տե՛ս "Российский статистический ежегодник", М., 1994 г., էջ 341, 346-347, **З. Е. Серова, И. Храмова, Н. Карлова, Т. Тихонова,** Аграрная реформа в странах с переходной экономикой, М. 2000, էջ 20:

[21] Տե՛ս «ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ», գ. 20, հ. 15, 1999, թ. 2, և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998 թ. հունվար-դեկտեմբերին», Եր., 1999, էջ 21:

[22] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հունիսի, 1992:

5. Տնտեսությունների մասնատման պատճառով խափանվեց գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները գյուղատնտեսության մեջ արմատավորելու գործընթացը: Գյուղատնտեսական արտադրության մանրատումը և մասնագիտական ծառայությունների կազմալուծումն ամենուրեք հանգեցրեց արտադրության տեխնոլոգիաների լուրջ խախտումների, բույսերի և կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի կանխարգելիչ և բուժման աշխատանքների բարձիթողի վիճակի, որը հողի էր համակարգային անկանխատեսելի հետևանքներով: Մինչև 1988 թվականը հողին տարեկան ավելացվում էր 100-120 հազ. տոննա ամոնիակային սելիտրա, 35-40 հազ. տոննա կարբամիդ, 150 հազ. տոննա կալիումական պարարտանյութեր և 1,5-2 մլն տոննա գոմաղբ: Վերջին 5 տարում Հայաստանում Ճապոնիայից և Վրաստանից ներկրվել է միջին հաշվով 20-30 հազ. տոննա ամոնիակային սելիտրա[23]: 1988 թ.-ից սկսած Հայաստան չի ներկրվել ոչ մի տոննա կալիումական ու ֆոսֆորական պարարտանյութ, որոնց օրգանական կիրառումը նվազել է առնվազն 10 անգամ: Հայտնի է, որ յուրաքանչյուր մեկ տոննա հացահատիկի բերքի հետ հողից օտարվում է 25 կգ ազոտ, 14 կգ ֆոսֆոր, 25 կգ կալիում և այլն: Դրանք գրեթե չեն վերադարձվում հողին: Եվ զարմանալի չէր, որ բերքատվության ցուցանիշները բուսաբուծական համարյա բոլոր մշակաբույսերի գծով իջել են: Իհարկե այստեղ կարևոր դեր է խաղացել նաև վերջին 11 տարիներին ավելի քան 60 000 հա ոռոգելի հողատարածքի անջրդի դառնալը: Հիմնական վտանգն այն է, որ այդ միտումը շարունակվելու դեպքում գյուղատնտեսական օգտագործելի հողատարածությունները շուտով կկորցնեն հողի որակական հատկանիշները, և կխորանա անապատացման գործընթացը:

6. Գյուղտեխնիկայի սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված սխալները հանգեցրին նրա փոշիացմանը ու դրանով իսկ կտրուկ ավելացրին ձեռքով կատարվող աշխատանքի ծավալը: Դա թուլացնում էր արտադրողների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը այդ միջոցները պահպանելու և արդյունավետ օգտագործելու հարցում: Մյուս կողմից այդ միջոցները միշտ չէ, որ ինչպես հարկն է ծառայեցվում են արտադրողների շահերին: Շատ հաճախ գյուղտեխնիկայի առանձին մասեր վաճառվում էին, իսկ տեխնիկան վերածվում էր թափոնների: Գյուղում տեխնիկան կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք այնպիսի սակագներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակել իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղգործիքների կազմակերպման զանգվածային արտադրություն: 1988 թ.-ից ի վեր Հայաստանում գյուղտեխնիկա չի ներկրվել, բացառությամբ Ճապոնիայի նվիրատվության՝ 46 կոմբայնի, 153 տրակտորի և չինացիների նվիրած ավելի քան 100 տրակտորի: Այժմ սեփականաշնորհված 14, 6 հազ. տրակտորից գործածության մեջ մնացել է 9,8 հազարը, որոնց գործունակության մակարդակը 75 % է, միջին տարիքը՝ ավելի քան 20 տարեկան[24]: Տեխնիկական պարկի մաշվածության պատճառով 1992 թ.-ից սկսած հացահատիկի կորուստը աճում է: Արդյունքում բերքահավաքի ընթացքում միայն տեխնիկական պարկի պատճառով տարեկան ավելի քան 20 հազ. տոննա բերքի կորուստ է լինում[25]:

Գյուղացիական տնտեսությունների մանր չափերը պահանջում են Հայաստանում ժամանակակից գյուղատնտեսական (լեռնային հողագործության և մանր արտադրության պահանջներին համապատասխանող) մեքենաշինության ստեղծում: Ուրեմն անհրաժեշտ է պետականորեն հոգ տանել հանրապետությունում եղած արտադրության միջոցների խնամքի ու պահպանման, դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման նկատմամբ: Այդ տեխնիկան կարելի է կենտրոնացնել համատեղ օգտագործելու նպատակով: Միաժամանակ համալիր ծրագիր մշակելիս հարկավոր է հաշվի առնել 50 ձիաուժանոց տրակտորների պահանջարկը և այն, որ տարիներ շարունակ չի թարմացվում գյուղտեխնիկայի հավաքակազմը, որի 2/3-ը

---

[23] Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան», *No* 3, սեպտեմբեր, 2001, էջ 45:

[24] Տե՛ս «ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ», 1999, գ. 7, հ. 2, թ. 424, 425:

[25] Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան», *No* 3, սեպտեմբեր, 2001, էջ 44:

շահագործվում է 15-20 տարուց ավելի, և միայն 2,7%-ն է, որ թողարկվել է 1994 թ.-ից հետո[26], բացակայում են օժանդակ տեխնիկա և այլ նյութեր ներմուծող տարբեր տեսակի միջնորդ ֆիրմաները, ընկերությունները, սակարանները, տեխնիկական նորոգումների կենտրոնները և տեխնիկայի վարձույթի կետերը: Փաստորեն ագրոսպասարկման աշխատանքները անարդյունավետ են՝ վճարման և այլ հարաբերությունների կարգավորված չլինելու հետևանքով:

Ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ուսումնասիրությունների՝ գյուղմթերքների արտադրության ծախսերի գերակշիռ մասն ընկնում է սպասարկման ոլորտին: Մասնավորապես մեքենայացված աշխատանքների ծախսերը կազմում են արտադրանքի արժեքի 41,5 %-ը, պարարտանյութերի և քիմիկատների ծախսերը՝ 18,5-%ը, ոռոգման ջրի վարձը՝ 15 %-ը[27]:

7. Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների և գործընթացի անհամաչափության հետևանքով, ինչպես նաև սեփականաշնորհված հողերի անհավասար պտղաբերության պատճառով գյուղական բնակչության մի մասը, հատկապես բարձրլեռնային շրջաններից, ջրազուրկ և չոր վայրերից ստիպված եղավ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու՝ համալրելով գործազուրկների բանակը: Սեփականաշնորհման գործընթացում համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ էլ ընդհանրապես մասնակցություն չէին ունեցել դրանց ստեղծմանը. դա ըստ էության «նոմենկլատուրային» սեփականաշնորհում էր: Այսպես, օրինակ, 1992 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահուն գյուղում անասունների սեփականաշնորհման ժամանակ 189 գլուխ կովերից ոչ մի բաժին չհասավ նույնիսկ 50-55 տարի շարունակ նույն տնտեսությունում աշխատող կոլտնտեսականներին, այլ դրանց տեր դարձան Երևան քաղաքի «ցեխավիկներից» երկուսը[28]: Սեփականաշնորհման այս փուլում արտադրության միջոցները փաստորեն սեփականաշնորհվեցին առանձին մարդկանց՝ էժան գներով (օրինակ՝ Վարդենիսի պանրի գործարանը իր շենքերով, արտադրական հոսքերով և այլն սեփականաշնորհվեց ընդամենը 400 ԱՄՆ դոլարով): Այդպիսի փաստերը շատ են[29]: Սեփականաշնորհումը շատ դեպքերում ծառայեցվում էր առանձին մարդկանց հարստացմանը, որն ամենևին էլ ձեռներեցության խթանում չէր:

8. Հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունը փաստորեն իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Անցման շրջանում թերագնահատվեց պետության կարգավորիչ դերը, պետության սուղ միջոցները, արտաքին աշխարհի նյութական ու ֆինանսական օգնությունը հիմնականում օգտագործվեցին ոչ թե գյուղատնտեսության զարգացման, այլ պարենի ներմուծման նպատակով: Բայց չէ՞ որ սեփական արտադրությունն է ցանկացած տնտեսության զարգացման հիմքը: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում է պետության գործուն հովանավորություն գյուղատնտեսությանը, ֆինանսական ու վարկային պետական աջակցություն: Հանրապետության առևտրային բանկերը պաշարների բացակայության պատճառով գյուղացիական տնտեսություններին երկարաժամկետ վարկեր չեն տրամադրել, իսկ արտոնյալ վարկերի մասին խոսք անգամ լինել չի կարող: Մինչև օրս չի գործում պարենային մթերքների սակարանը, որին շուկայական սկզբունքներով զարգացող գյուղատնտեսության մեջ առանցքային դերակատարում էր վերապահված: Այն կոչված էր կարգավորելու արտադրողի և գնորդի հարաբերությունները: Մինչ այժմ, ցավոք, չի հաջողվել փոխշահավետ լուծումներ գտնել արտադրողների և մթերող ու վերամշակող ձեռնարկությունների միջև, որի հետևանքով մթերումների ծավալը կտրուկ կրճատվել է:

---

[26] Տե՛ս նույն տեղը:

[27] Տե՛ս «Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան», 2001, էջ 76:

[28] Տե՛ս ՀՀ ՀՔ.Կ.Պ.Ա., ֆ. 4516, ց. 1, գործ 50, թերթ 7-8:

[29] Տե՛ս նույն տեղը, էջ 8-9, «Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում», Եր., 2000, էջ 12:

9. Հողի սեփականաշնորհումը կենսագործվեց համատարած, այլ ոչ թե մաս առ մաս: Օրջափակման ու պատերազմի պայմաններում ժամանակավորապես կարելի էր պահպանել այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք շահութաբեր էին ու դեռևս կարող էին ապահովել բարձր արտադրողականություն:

Հանրապետության տնտեսական կյանքում իրականացվող կառուցվածքային ինտենսիվ փոփոխությունների հետևանքով լրջորեն փոխվեցին գյուղատնտեսությանը ներկայացվող պահանջները: Սակայն գյուղատնտեսությունը միշտ չէ, որ կարող է արագ վերակառուցվել և հարմարվել շուկայի պահանջներին: Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումներն ու դրանց դիմաց մթերքների ստացումը ժամանակով կտրված են միմյանցից: Ծախսերը կատարվում են ամբողջ տարում, մինչդեռ մթերքների մեծ մասը տարեկան ստացվում է մեկ անգամ, առանձին տեսակների արդյունքը երևում է ներդրումներից 3-8 տարի հետո միայն: Աշխատանքի տեխնիկական զինվածության շատ ցածր մակարդակ ունեցող հայ գյուղացու արտադրողականությունն ու եկամուտները մեծ տատանումներ ունեն, որոնք պայմանավորված են նաև բնակլիմայական ամենամյա փոփոխություններով:

2000 թ. գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և բնակչության օժանդակ տնտեսություններում ցանվել էր հացահատիկային մշակաբույսերի 81%-ը, պարենային-բոստանային մշակաբույսերի 73,6%-ը, տեխնիկական մշակաբույսերի 75%-ը և կերային մշակաբույսերի 85,1%-ը[30]:

10. Հակակարկտային ծառայությունն իսպառ վերացվեց: Դա մեծ վնաս պատճառեց գյուղատնտեսությանը: Գյուղատնտեսության նախարարության մասնագետների հաշվարկներով վերջին մի քանի տարում տնտեսությունը տարեկան 1 մլրդ դրամի վնաս է կրել միայն բնական աղետներից: Դրա լավագույն վկայությունն է 2001 թ.-ը, երբ հանրապետության բոլոր մարզերը ենթարկվեցին կարկտահարության: Ներկայումս հայտարարվում է, թե պետությունը հակակարկտային կայանների տեղադրման ֆինանսական միջոցներ չունի, իսկ եղածը արդեն քանդվել ու ավերվել է կամ օգտագործվել է այլ կարիքների համար: Մեր կարծիքով, ցանկացած գյուղացի չի հրաժարվի տարեկան հազար կամ 2 հազ. դրամ տրամադրել այդ նպատակին, հատկապես եթե համոզվի դրա արդյունավետության մեջ:

11. Մինչև 1993-94 թթ. սահմանամերձ գյուղի ժողովուրդը հողին կապված հավատով ապրում էր: Ներկայում սահմանամերձ ու հեռավոր լեռնային գյուղերն ինտենսիվորեն դատարկվում են: Հանրապետությունում չմշակվող հողերի 15-16 %-ը հենց այդ հատվածում է: Որքան էլ ֆինանսական առումով դժվար է, այնուհանդերձ անհրաժեշտ է լրջորեն աջակցել սահմանում ապրող բնակչությանը: Անհրաժեշտ է այդ գոտին ապահովել էժան ու որակյալ սերմացուով, մեխանիզացիայով, քիմիկատներով: Պետք էր ժամանակին նրանց տալ բոլոր հնարավոր արտոնությունները: Դա է սահմանամերձ ու լեռնային գյուղերի փրկությունը:

12. Հանրապետությունը, ունենալով գրեթե ամեն տեսակի սննդով, բացառությամբ հացի ու մի քանի սննդատեսակի, պարենային անվտանգության խնդիրները լուծելու մեծ հնարավորություններ, վերջին տարիներին ավելացրել է գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը: Մասնավորապես աճել է կաթնամթերքի, այլուրի, շաքարի, կենդանական ու բուսական յուղերի, ծխախոտի ներմուծման ծավալը: Հանրապետության անկախացումից ի վեր արտաքին առևտրի ամենամեծ դեֆիցիտը կազմում է ագրոպարենը: 1998 թ. այն կազմել է 169 մլն դոլար, 1999 թ.՝ 99 մլն, 2000 թ.՝ ավելի քան 120 մլն դոլար[31]:

13. Փաստորեն 11 տարում այդպես էլ չապահովվեց գյուղատնտեսությանը սպասարկող ենթակառույցների բնականոն գործունեությունը: Չափազանց երկարաձգվեց մթերող կազմակերպությունների սեփականաշնորհումը: Նախքան սեփականաշնորհումը և դրանից հետո էլ այդ կազմակերպությունների չնչին մասն էր

---

[30] Տե՛ս «ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ», գ. 20-15-99, էջ 7:

[31] «Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան», *No* 3, սեպտեմբեր, 2001, էջ 46:

մթերումներ իրականացնում՝ այն էլ բավական ցածր գներով, ցուցաբերելով խիստ կամայական վերաբերմունք: 1980-ական թթ. գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արդյունաբերության արդյունքը կազմել է ՀՀ համախառն արդյունաբերական արտադրանքի 18 %-ը: 1990-96 թթ. դրա ծավալները նվազել են մոտ 70 %-ով: Գործող բոլոր ձեռնարկություններն աշխատում են հզորության 25 %-ով, պտուղ-բանջարեղենի վերամշակման ձեռնարկությունները՝ 6 %-ով, խաղողինը՝ 25 %-ով, մսինը՝ 0,1 %-ով, կաթինը՝ 0,6 %-ով[32]:

Ընդհանրապես, 1991 թ.-ից մինչև 1994 թ. գյուղատնտեսությունն անկում էր ապրում: Սկսած 1995 թ. իրավիճակն սկսեց շտկվել, բայց և 1998 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմեց 1991 թ. մակարդակի 98 %-ը: Գրեթե նույն ցուցանիշն էր 2000 թ.: 1997 թ. մշակվեց ՀՀ Ագրոպարենային համակարգի 1997-2001 թթ. սոցիալ- տնտեսական բարեփոխումների ծրագիր, որը արժանացավ ՀՀ կառավարության հավանությանը: Այս ծրագրի իրականացման շնորհիվ կասեցվեց գյուղատնտեսական արտադրության անկումը, տեղի ունեցավ կայունացում, իսկ որոշ ճյուղերում՝ նաև զարգացման դրական տեղաշարժեր: 1997-2001 թթ. յուրաքանչյուր տարի մթերվեց 50 հազ. տոննա խաղող, միջոցներ ձեռնարկվեցին ծխախոտագործության վերականգնման ուղղությամբ: «Գրանդ տոբակո» ընկերությունը պայմանագրային հիմունքներով գյուղացիական տնտեսություններից 1998 թ. մթերեց 1,5 հազ. տոննա ծխախոտի հումք: Նախատեսվում է առաջիկա երկու տարում այդ հումքի ծավալները հասցնել 8-10 հազ. տոննայի[33]: Ընդարձակվեցին կարտոֆիլի՝ 60 %-ով և բանջարեղենի՝ 40 %-ով ցանքատարածությունները: Աճեց համախառն բերքը: Եթե 1990 թ. մեկ շնչին ընկնում էր 60 կգ կարտոֆիլ, ապա 2001 թ.՝ 109 կգ, բանջարեղենի համախառն բերքը 390 հազ. տոննայից հասավ 450 հազ.-ի: Մեկ շնչին ընկնող ծավալը աճել է 7-8 %-ով[34]:

Վճռական նշանակություն էր ստանում հողի շուկայի ձևավորման և տնտեսությունների խոշորացման գործընթացների արագացումը: ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թ. նոյեմբերին ընդունվեց «Գյուղական համայնքների վարչական տարածքներում գտնվող պետական սեփականություն համարվող պահուստային ֆոնդի հողերի օտարման կարգի մասին»[35] ՀՀ օրենքը: Համաձայն այդ օրենքի՝ գյուղական համայնքների վարչական տարածքներում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը օտարվում են՝ վաճառելու և անհատույց փոխանցելու միջոցով՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար և որպես տնամերձ: Սահմանվեց, որ պետական սեփականություն հանդիսացող պահուստային ֆոնդի հողերը անհատույց փոխանցվում են՝ ա) սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային և լքված գյուղական բնակավայրերում բնակվող քաղաքացիներին, որոնք նախկինում չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, բ) Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, որոնք ցանկություն են հայտնում մշտական բնակություն հաստատել վերոհիշյալ բնակավայրերում, գ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ վերաբնակեցվածներին, հանրապետության գյուղական համայնքներում բնակվող զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների անդամներին, որոնք նախկինում չեն մասնակցել հողի սեփականաշնորհմանը:

Ելնելով գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների և գյուղատնտեսական մթերքներ արտադրող այլ սուբյեկտների արտադրատեխնիկական սպասարկման անհրաժեշտությունից՝ մշակվեց «Գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների բարելավման միջոցառումների մասին» ծրագիր, որը քննարկվեց և ՀՀ կառավարության 1999 թ. ապրիլի 22-ի թիվ 255 որոշմամբ, հավանության արժանացավ[36]: «Ագրոսպասարկում» և «Բերրիություն» բաց բաժնետիրական

---

[32] Տե՛ս նույն տեղը:

[33] Տե՛ս Վ. Մովսիսյան, Հողի ճակատագրով, Եր. 2001, էջ 254:

[34] Տե՛ս «Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան», սեպտեմբեր, *No* 3, 2001, էջ 44:

[35] «ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.)», գիրք Բ, էջ 744-748:

[36] Տե՛ս նույն տեղը:

ընկերությունների բազայի վրա, հիմք ունենալով խորհուրդների որոշումները, Հանրապետությունում ստեղծվեց գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների 11 կենտրոն, և յուրաքանչյուրի համար կազմվեց առանձին ծրագիր: Նրանց հանձնվեց Ճապոնիայից ստացված գյուղատնտեսական տեխնիկան և Չինաստանի կառավարության նվիրած 100 փոքր տրակտորները՝ իրենց կցագործիքներով: Վերոհիշյալ ծրագրի իրականացումը հնարավորություն ստեղծեց գյուղացիական տնտեսություններին մատուցել մատչելի սպասարկումներ ու ծառայություններ:

Հանրապետության ոռոգման բնագավառում ծառացած խնդիրները լուծելու նպատակով գործողության մեջ դրվեց հանրապետության ոռոգման համակարգերի բարեփոխումների ծրագիրը 1998-2005 թթ. համար: Վերոհիշյալ ծրագրի համաձայն՝ հանրապետության 484 համայնքներում ստեղծվեցին ՋՍՊ-ներ և ՋՍԿ-ներ, որոնցից 128-ում ոռոգման ներքին ցանցի վերականգնումը կատարվում է վարկային միջոցների հաշվին: Կատարվեց Արարատյան հարթավայրում մոտ 20 հազ. հա-ի վրա ցամաքուրդային համակարգի վերականգնման և հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ: Ավարտվեցին Սպանդարյանի մայր ջրանցքի վերականգնման և Նոր Գեղիի ջրատարի շինարարության աշխատանքները, մեխանիկական եղանակով ոռոգումը փոխարինվեց ինքնահոսով, որն ապահովվեց 14 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիայի խնայողություն: Ավարտվեցին նաև 5 օբյեկտների, այդ թվում Վայք-Եղեգնաձոր ջրատարի մեխանիկական եղանակով ոռոգումը ինքնահոսով փոխարինելու աշխատանքները:

Անկախության տարիներին հանրապետությունում իրականացավ նաև հողային շուկային սպասարկող մասնավոր սեկտորի կայացումը. 2000 թ. արդեն գործում էին շուկայական գնահատման 40 և 116 հաշվառող-քարտեզագրող մասնավոր ընկերություններ[1]: Հանրապետության 930 համայնքներից կադաստրային քարտեզագրում է կատարվել և սեփականության իրավունք է տրվել մոտ 300 համայնքների[2]: Այլ կերպ ասած՝ անշարժ գույքի շրջապտույտի մեջ լիարժեք ձևով ընդգրկված է միայն հանրապետության տնտեսական հարստության մեկ երրորդը:

Սակայն, չնայած կատարված աշխատանքներին, գյուղատնտեսության ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

1. Անհրաժեշտ է պետական գործուն միջամտությամբ վերականգնել խաղողագործությունը և գինու արտադրությունը: Հացահատիկային մշակաբույսերը պետք է աճեցնել միայն այնտեղ, որտեղ կան վարման նախապայմաններ՝ Ծիրակի հարթավայր, նախալեռնային գոտի: Նշված վայրերում հնարավոր է բերքատվությունը հասցնել 50 և ավելի ցենտների: Կերային մշակաբույսերի աճն ապահովելու համար անհրաժեշտ է պահուստային հողերն առավել հաճախ տալ վարձակալության: Մյուս մշակաբույսերից պետք է առանձնացնել խորդենու աճեցման անհրաժեշտությունը, շաքարի ճակնդեղի տարածքների վերականգնումը, իսկ բանջարաբոստանային մթերքների և կարտոֆիլի արտադրության նպատակով հատկացված տարածությունները պահպանել, բայց դրանք օգտագործել առավել արդյունավետորեն:

2. Քննական վերլուծությունը պահանջում է հանրապետության ագրարային ոլորտի հետագա բարեփոխումների վերջնական նպատակի բացահայտում: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մշակել ագրարային ոլորտի ռազմավարության երկարաժամկետ ծրագիր, որը հողօգտագործման և հողային հարաբերությունների ոլորտում պահանջում է հողերի վերաբաշխում, խոշորացում: Չպետք է մոռանալ, որ աշխարհում ֆերմերային տնտեսությունները գերազանցապես ընտանեկան չեն: Այդ նպատակին հասնելու համար պետք է արագ ձևավորվի ու գործի հողի շուկան, որոշ փոփոխություններ կատարվեն հողային հարաբերությունների իրավական

---

[1] Տե՛ս Հ. Սարգսյան, Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. Գիտությունների դեր, Եր., 2001, էջ 60:

[2] Տե՛ս նույն տեղը:

կարգավորման համակարգում: Այս ուղղությամբ, իհարկե, իրականացվեցին որոշակի քայլեր՝ 1994 թ. փետրվարին ընդունվեցին «Հողի հարկի մասին», 2001 թ. մարտի 20-ին՝ «Հողի հարկի արտոնությունների մասին» օրենքները[39] և ՀՀ կառավարության 2001 թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին»[40]: Այդ օրենքներով համակարգվում էին հողատարածքների գոտևորման, հողի տնտեսական օգտագործման, նրա արդյունավետ վերաբաշխման պայմանները: Անհրաժեշտություն է ակտիվացնել պետության արդյունավետ ներգործությունը հողի տնտեսական օգտագործման որոշ սահմանափակումներ մտցնելու, ջրի և օդի աղտոտման սահմանային մակարդակի, սննդամթերքի որակի, ինչպես նաև՝ պետական և հանրային նպատակներով հողը հարկադրաբար ետ գնելու իրավունք տալու միջոցով հողի սեփականության ապահովագրված իրավունքի երաշխավորման ուղղությամբ, որը կնպաստի մասնատված հողակտորների միավորմանը և պայմաններ կստեղծի ապրանքային արտադրությամբ զբաղվող տնտեսությունների զարգացման, հողի արդյունավետ օգտագործման համար: Բացի դրանից, անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման համար: Հրատապ են նաև «ՀՀ կոոպերացիայի մասին» օրենքի մշակումն ու ընդունումը, ինչպես նաև՝ շուկայական ենթակառուցվածքների ներդրման արագացումն ու զարգացումը, գյուղական վայրերի սոցիալական վիճակի բարելավումը, մշակել պետական-ագրարային ու վարկային քաղաքականություն, որն ապահովի բնակչության սննդամթերքի արտադրությունն ու բաշխումը համակարգելու գործը: Հարկավոր է ընդունել նաև «ՀՀ պարենային անվտանգության մասին» օրենք, նպաստավոր պայմաններ ստեղծել գյուղատնտեսության բոլոր ճյուղերի համալիր զարգացման համար:

3. Փաստորեն գյուղերում սեփականաշնորհման արդյունքում առաջացան մեկնարկային տարբեր հնարավորություններով ընտանիքներ, որոնց սոցիալական տարբերությունները խորանում էին մինչ վերափոխումներն ունեցած բազային հնարավորությունների տարբերություններով՝ աշխատող տղամարդ ունեցող - չունեցող, մանկահասակ բազմազավակ և գլխավորապես աշխատանքային տարիքի կազմով ընտանիքներ, միայնակ կամ միայն թոշակային տարիքի կազմով ընտանիքներ, պաշտոնյաների հետ կապեր ունեցողներ և այդպիսիք չունեցողներ և այլն: Հողի բաշխման հետ միասին սոցիալական և վարկային ոչ ճիշտ քաղաքականություն իրականացրած երկրում ամենածանր կացության մեջ հայտնվեցին աշխատուժ չունեցող ընտանիքներն ու փախստականները:

Այս սխալներն ու թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է մշակել գյուղատնտեսության զարգացման համալիր ծրագիր:

4. Կամավորության սկզբունքով գյուղացիական տնտեսությունների, սպասարկող, մթերող, վերամշակող, փոխադրող, իրացնող և այլ կազմակերպությունների միավորումը, գյուղում հարկային ծանր բեռի թեթևացումը, դրանց հիման վրա ավելորդ, ոչ անհրաժեշտ ծախսերի ու կորուստների կրճատումը պարենային համալիրի գործունեության արդյունավետության բարձրացման ուղիներից են: Բոլոր դեպքերում գյուղատնտեսության զարգացման նկատմամբ պետք է համալիր մոտեցում լինի, կարգավորումը՝ տնտեսական լծակներով, իսկ հովանավորումը՝ պետության կողմից: Այս խնդիրների լուծումը, մեր կարծիքով, անհրաժեշտ պայմաններ կստեղծի հանրապետության գյուղատնտեսության ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, զարգացման ուղի դուրս բերելու համար:

Հարկավոր է ընդգծել, որ գործող օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին տրված է եղել հողի կառավարման գործառույթների հնարավորություն՝ իրենց վարչական տարածքների սահմաններում, սակայն դրանք չէին կարող լիարժեքորեն իրականացվել:

---

[39] Տե՛ս «ՀՀ գործող օրենքների ժողովածու 2001 թ.», գիրք Դ, Եր., 2001, էջ 95-97:

[40] Տե՛ս «ՀՀ հողային օրենսդրությանը վերաբերող իրավական ակտերի ժողովածու», Եր., 2001, էջ 10-29:

5. Հողային հույժ կարևոր հարաբերությունները կատարելագործելու համար հասունացել է գիտաարտադրական, ուսումնական և կառավարման միասնական մեթոդաբանական հարցերի մշակման կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը: Մեր կարծիքով, այն նպատակահարմար է հիմնել նախկին Հայհողշինանախագիծ ինստիտուտի հիմքի վրա՝ հետամուտ լինելով հողերի դիտարկման, ճահճացման, հողմահարման, անապատացման, էրոզիայի, անտառային շերտի, Սևանի մակարդակի նվազման և այլ հիմնախնդիրների լուծմանը:

Ագրարային ոլորտում դեռևս լուծում պահանջող խնդիրներ են գյուղատնտեսության հետագա կոոպերացումը, մթերումների հստակ կազմակերպումը, արտադրատեխնիկական սպասարկումների կատարելագործումը, վարկերի ավելացումն ու վարկավորման մեխանիզմների կատարելագործումը, ապահովագրությունը: Առանց այս խնդիրների լուծման անհնար է Հայաստանի գյուղատնտեսության արդյունավետ զարգացումը:

Э. Г. МИНАСЯН - ***Аграрная реформа 1991-2002 гг. в Республике Армения.*** - Приватизация в Армении началась с аграрного сектора. Она, в первую очередь, предполагала обеспечение населения сельскохозяйственными продуктами, повышение материальной заинтересованности и трудовой активности села. Однако переход к частному землевладению осуществлялся без предварительно разработанной программы, вследствие чего при осуществлении аграрной политики был допущен ряд существенных ошибок, породивших новые трудности в этой области.

В статье не только выявлены ошибки и упущения начального периода, но и даны конкретные предложения, которые могут способствовать плодотворному развитию сельского хозяйства в дальнейшем.